ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 13 » հոկտեմբերի **2023թ.**

№ ԳԲ/34.3-Մ2-4/3906-2023

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍՊԸ-ի
տնօրեն Ս. Սանթրոսյանին

Հարգելի պարոն Սանթրոսյան,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տուգանելու մասին» №354-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 3 էջ:

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Signed by: SAFARYAN ARTUR 2401750053

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Է. Ներսիսյան ☎ 528590 (348)

600.0354.13.10.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2023 թվականի №354-Ա

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության Հանձնաժողով ներկայացման կարգի №2 հավելվածի №2-2 ձևով սահմանված՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ն է,

գ) «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի №376-Ա և 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №383-Ա որոշումներով տրամադրված՝ համապատասխանաբար «Անապատ-1» և «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության

№0560 և №0622 լիցենզիաների մասով 2023 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Տեղեկատվությունը Որոշմամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով,

դ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2023 թվականի օգոստոսի 4-ից Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է օրենքով սահմանված կարգով,

ե) Ընկերությունը 2023 թվականի 1-ին կիսամյակի Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել սահմանված ժամկետից հետո՝ 2023 թվականի օգոստոսի 16-ին, իսկ Տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ հիմնավորում չի ներկայացրել,

զ) 2022 թվականի դեկտեմբերի 23-ից անբողոքարկելի դարձած՝ Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 16-ի №479-Ա որոշմամբ Ընկերությունը նախազգուշացվել է Տեղեկատվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար,

է) Հանձնաժողովի իրականացրած վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0560 և №0622 լիցենզիաների մասով 2023 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Տեղեկատվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, և առկա է այդ խախտման կրկնակիություն, որի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, Ընկերության նկատմամբ ենթակա է կիրառման տուգանք: Միաժամանակ, հաշվի առնելով, որ խախտումն առկա է Ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0560 և №0622 լիցենզիաների մասով, Հանձնաժողովի գնահատմամբ, Ընկերության նկատմամբ ենթակա է կիրառման համապատասխան խախտման համար նախատեսված տուգանքի առավելագույն չափը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 10-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 35-րդ հոդվածի 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ք. Երևան
13 հոկտեմբերի 2023թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԳԲ/34.3-Մ2-4/3906-2023 պ/տ

Նալ

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☐ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Թերի հասցե/ Insufficient address	☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date	

Հարկը գանձված է Tax percue	HAYPOST

L0111697140AM

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍՊԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ., 6/2, բն 2

YEREVAN
0002
22 NOV 2023

YEREVAN
0014
16 OCT 2023

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ
ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ., 6/2, բն 2

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող
գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

Առաջնային/Priority
Օդային/By airmail

- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO111697140AM

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

AL0111697140AM

Հավելյալ Նշում 1՝ ԳԲ/34.3-Մ2-4/3906-2023 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

YEREVAN
ARMENIA
0002
22 NOV 2023
Post
YEREVAN
0014
16 OCT 2023